Osmanismus, Nationalismus und der Kaukasus. Հրտ. **Fikret Adanir** եւ **Bernd Bonwetsch**, Wiesbaden 2005 (Kaukasienstudien – Caucasian Studies, Ed. Eva-Maria Auch, Bd. 9) *(Օսմանականութիւն, Ազգայնականութիւն եւ Կովկասը: Իսլամներ եւ Քրիստոնեաներ, Թուրքեր եւ Հայեր 19-20 դարում):*

«Հայկական Հարցը», հայկական ցեղասպանութիւնը քաղաքական եւ դիւանագիտական բեմի վրայ 90 տարիներ շարունակ մերթ մոռացութեան մատնուած եւ մերթ հրատապ այժմէականութիւն շահած պատմական իրականութիւն մըն է:

Տարիներու ընթացքին՝ ըստ նոր ճանաչումներու, փաստաթուղթերու եւ փաստերու նոր յայտնաբերումներու, ստեղծուած է ստուար գրականութիւն մը:

Հարցի քննարկումը անխուսափելիօրէն թելադրուած է ոչ միայն կովկասեան, այլ եւ միջազգային քաղաքական հետաքրքրութիւններէ:

Ցեղասպանութեան 90-ամեակը եւ վերջին տարիներու թրքական եւ օսմանեան. դիւաններու մասնակի տրամադրելիութիւնը եւ Թուրքիոյ ձգտումները՝ Եւրոպայի միութիւն մտնելու՝ հարցին կրկին տուած են այժմէականութիւն:

Հետեւեալ հատորը, համադրուած է մեծ մասամբ՝ հրատարակիչներու կողմէ կազմակերպուած, Գերմանիոյ Պոխում քաղաքի մէջ գոյացած կովկասագիտական համագումարի զեկոյցներէն: Յառաջաբանի եւ ներածականի մը կը յաջորդեն 13 զեկոյցներ:

Նախաբանին մէջ հրատարակիչները կու տան գրքի կազմութեան պայմաններու մասին տեղեկութիւններ, յիշելով նաեւ դժուարութիւնները, որոնք յառաջ եկած են հարցի քննարկման հետ առընչուած անհամաձայնութիւններէ, ծայրայեղական կեցուածքներէ կամ թարգմանական պատճառներով:

Հատորիս յօդուածները կը քննարկեն կովկասեան տարածքաշրջանի «բազմատեսակ հարցեր եւ երեւոյթներ»:

Ներածականին մէջ (էջ 1-19) հակիրճ, բայց մեծ ճշգրտութեամբ եւ բաւականին սպառիչ կերպով ներկայացուած են պատմական իրադարձութիւնները, հարցերու յառաջացման քաղաքական, կրօնական, տնտեսական, ցեղաբանական պատճառները:

Ընդհանուր գիծերու մէջ պատկեր մը կը տրուի 15.-20. դարերու կարեւոր, հայ ժողովուրդի համար՝ ճակատագրական կամ անկիւնադարձային իրադարձութիւններու, ինչպէս Պոլսոյ պատրիարքութեան հաստատումը, միլլէթի դրութեան կիրարկումը, ազգային սահմանադրութիւն եւն.: Իրադարձութիւններ, որոնք Արեւմտահայաստանի, Կիլիկիայի եւ Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս բնակող հայերու ինքնորոշման եւ որոշ ներքին անկախութեան առի՞թ եղան, թէ սահմանափակում... Հոս կը խօսուի նաեւ 1895/96ի ջարդերու եւ 1915 ցեղասպանութեան մասին:

Ներածականի հեղինակները՝ Fikret Adanir եւ Bernd Bonwetsch կու տան պատկեր մը պատմական իրադարձութիւններու քննարկման, ուսումնասիրման, մեկնաբանման եւ արժեւորման: Նկատի առնուած են երկու կողմերն ալ: Հայկականը՝ ցեղասպանութեան ճանաչման պահանջքը եւ թրքական ուրացման քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ զուգահեռները եւ ցեղասպանութեան նախօրինակ ծառայելը երկրորդ համաշխարհային պատերազմին՝ Գերմանիոյ կողմէ կատարուած բնաջնջումներուն: Յօդուածներու մէջ արտայայտուող կարմիր գիծը «ազգայնականութեան» երեւոյթն է եւ անոր պատմական դրսեւորումները. հայ-թուրք եւ քրիստոնեայ-իսլամ յարաբերութիւնները անցեալին եւ ներկայի մէջ (հմմտ. էջ 11):

Յաջորդ էջերուն մէջ (11-19) կը տրուի ամփոփում մը յօդուածներու մէջ քննարկուած հարցերուն:

Adam Volker (էջ 21-42):

«Պատմութեան խեղաթիւրումը ազգայնական ընկերվարականութեան ազդեցութեան տակ Սովետ Միութեան վերջը - Ատրպէյճանի օրինակը»:

Խորագիրը արդէն յստակ կու տայ յօդուածին բովանդակութիւնը: Ատրպէյճանի տարածքին «ազերի ազգ» ստեղծելու գաղափարը եւ փորձերը, մինչեւ իսկ պատմութեան դասագրքերու մէջ եղած խեղաթիւրումները եւ այդ նպատակով ստեղծուած տեսութիւնները:

Michael Kohrs (43-63)

«Պատմութիւնը իբր քաղաքական փաստարկութիւն: «պատմաբաններու պայքարը» Լեռնային Ղարաբաղի շուրջ»:

Յօդուածը ունի հետեւեալ ենթաբաժանումները. «Ներածութիւն» (էջ 43-46), «Պատմական պահանջքներու սերումը հին ժամանակներէ մինչեւ Ա. պատերազմ» (էջ 46-52), «Լեռնային Ղարաբաղի շրջանի հիմնադրութիւնը» (էջ 52-57), «Պարտադրուած խաղաղութենէն մինչեւ նոր պատերազմ» (էջ 57-61), «Վերջաբան» (էջ 61-63):

Ըստ հեղինակին «այս յօդուածին մէջ վաւերագրուած է պատմական-հրատարակչական բանավէճը, որ գործնականին իբր հայերու եւ ազերիներու զինեալ հակամարտութեան «հրետորական ներածականի հանգրուան» կարելի է նկատել» (էջ 61):

Փաստարկումները նախորդ յօդուածագրէն չեն տարբերիր: Սակայն այս յօդուածի մէջ ան կը կենդրոնանայ Լեռնային Ղարաբաղի զինեալ հակամարտութեան վրայ:

Daniel Müller

«Հայերը Էլիզաբեթպոլի կառավարութեան Ճըպրայիլի, Շուշիի եւ Զվանշիրի շրջաններուն մէջ 1886-ի «ընտանեկան ցանկեր»ու համաձայն» (էջ 65-83):

Բնակչութեան վիճակագրական տուեալներ կարեւոր աղբիւրներ են ցեղային հակամարտութիւններու լուծման համար: Հեղինակը սակայն ցոյց կու տայ նաեւ որ որքանով կարելի է պարագաները խեղաթիւրել, եթէ նկատի չառնուին մինչեւ իսկ ամենափոքր գիւղական բնակչութեան ներգրաւումը այդ ցանկերուն մէջ:

Այս «ընտանեկան ցանկեր»ու համաձայն հայերը Ճպրայիլէն-Զվանշիր հողաշերտի վրայ եղած են մեծամասնութիւն: Օգտագործուած ցանկերը յառաջ բերուած են ամբողջութեամբ, ուր կայ նաեւ ոչ հայ բնակչութեան թուերը: Անոնք որոնք այս շրջանի հայ բնակչութեան գոյութիւնը կ'անտեսեն «չեն յաջողիր կազմել Ատրպէյճանի պատշաճ պատմութիւն մը, որ տարբեր է ազերիներու պատմութենէն» (էջ 83):

Parvin Akhanchi

«20.րդ դարու սկզբին միջցեղային հակամարտութիւններու ժամանակ՝ Պաքուի քարիւղի դաշտերու ճարտարարուեստի բանուորներու յարաբերութիւնները» (էջ 85-98):

Ըստ հեղինակին հայերու եւ ազերիներու մէջ գոյացած բուռն հակամարտութիւններու պատճառները միայն ցեղային-կրօնական չէին, այլ նաեւ ընկերային: Բախումները դրդուած էին դուրսէն, որոնք խանգարած էին բանուորներու խաղաղ համակեցութիւնը:

«Ամփոփելով կարելի է հաստատել թէ լուրջ բախումներ ազերիներու եւ հայերու միջեւ 1905ի Օգոստոսի Պաքուի դէպքե-

© National Library of Armenia

րուն «անհրաժեշտ» չէին այն իմաստով որ իսկական հակամարտութիւններ գոյութիւն ունենային այդ շրջանի երկու ցեղային-կրօնական խումբերուն միջեւ, եւ կամ առնուազն բանուորներու եւ կամ բանուորներու եւ գործատէրերու միջեւ: Նաեւ Noble Brothers քարիւղի ընկերութեան փաստաթուղթերը ցոյց կու տան, որ ոչ միայն հայերն էին այս բախումներու զոհերը, այլ նաեւ ազերի-իսլամներ բաւականին տանջուած են»: (էջ 98):

Eva-Maria Auch

«Հայ-թաթարական հակամարտութիւններու դերը՝ ազերիական «մենք-խմբային ինքնութեան» եւ ընկերային կազմակերպութիւններու կազմաւորման, 20րդ դարուի սկիզբը» (էջ 99-132): Յօդուածը ունի ենթաբաժանում մը. «Ազգային-իսլամական կուսակցութիւններու նախնական ձեւերը» (էջ 11):

1905ի դէպքերու հիման վրայ ազերիներու մօտ կը կազմուի. պատկանելիութեան եւ խմբային ինքնութեան գիտակցութիւն, որ կ'առաջնորդէ իսլամական քաղաքական եւ բարեսիրական միութիւններու կազմութեան:

էջ 114-116 կու տայ մանրամասն ցանկ մը կովկասի շրջանի կուսակցութիւններուն:

Oliver Reisner

«Մշակութային ինքնավարութեան եւ պետական անկախութեան միջեւ. քաղաքական մտայղացումներ եւ միջցեղային յարաբերութիւնները Թիֆլիսի մէջ, 1905-1971» (էջ 133-151): «1907-1914 տարիները - Ցառաջդիմութիւններ եւ Ազգակազմութիւն» (էջ 142):

Այս յօդուածին մէջ հեղինակը կը կենդրոնանայ 1905ի դէպքերուն յաջորդող վրացական կուսակցութիւններու կազմութեան վրայ:

Ruben Safrastyan

«Հայ ազատականները եւ սահմանադրական շարժումը Օսմանեան կայսրութեան մէջ, 1867-1876» (էջ 153-164):

Ըստ հեղինակին հայ ազատականները ներշնչուած էին սահմանադրութեան շարժումէն: Լուսաւորեալ օսմանականութիւնը կը տեսնէին անոնք եւ կը կարծէին «ազգային» բաժնել քաղաքականութենէն: Մինչեւ իսկ «Երիտասարդ օսմաններու» շարժումը անոնք դիմագրաւած են համակրանքով: Սակայն ազատական եւ բազմազգ Օսմանեան կայսրութեան մը գաղափարը չվերածուեցաւ իրականութեան:

Ralf Martin Jäger

«Հայերու կարեւորութիւնը օսմանեան երաժշտական արուեստի փոփոխութեան՝ 19րդ դարու երկրորդ կէսին» (էջ 165-182) - «Հայերը եւ աւանդական երաժշտական արուեստի փոփոխութիւնը» (էջ 165-171), «Հայերը եւ օսմանեան երաժշտական կեանքի եւրոպականացումը» (էջ 171-176), «Հայ երգահաններ Պոլսոյ մէջ եւ իրենց համարկման հարցը օսմանեան երաժշտական կեանքին մէջ» (էջ 176-180):

Հայերու ներդրումը Թրքական երաժշտութեան մէջ անվիճելի է: Օսմանեան երաժշտութեան եւրոպականացման մէջ, սկզբնական շրջանին զինուորական քայլերգներով մինչեւ աւելի ուշ օպերայով, մեծ վաստակ ունին հայ երաժիշտներ եւ վայելած են մեծ վարկ: Անոնք ազատականներու նման հաւատացած էին խաղաղ համակեցութեան, եւ զարմանալի չէր, ոմանք մօտ զգային նոյնիսկ «Երիտթուրքերուն», ականկալելով անոնցմէ հանդուրժողութիւն քիրստոնեայ փոքրամասնութիւններու հանդէպ:

Mustafa Gencer

«Հայկական հարցը Գերման-Օսմանական յարաբերութիւններու համապատկերին մէջ (1878-1915)» (էջ 183-202):

Յստակ էր գերմանացիներու կեցուածքը «Հայկական հարց»ի նկատմամբ: Գերմանիոյ համար Թուրքիան քաղաքական դաշնակից էր: Արդէն Պերլինի դաշինքէն սկսեալ (1878) եւ մանաւանդ Ա. համաշխարհային պատերազմի շրջանին պարզ էր որ Գերմանիան պաշտպանէր Թուրքիոյ շահերը եւ հետաքրքրութիւնները: Հեղինակը կը նկատէ Գերմանիան իբր մասնակից-պատասխանատու հայերու ցեղասպանութեան:

Hilmar Kaiser

«Գերմանական դիւանագիտութիւնը եւ հայկական ցեղասպանութիւնը» (էջ 203-235):

Այս յօդուածին մէջ քննարկուած է Ա. համաշխարհային պատերազմին՝ գերմանացի դիւանագիտական ներկայացուցիչներու կեցուածքը հայերու ցեղասպանութեան նկատմամբ: Յստակ կը տեսնուի թէ գերմանացիները քաջատեղեակ էին պատահարներուն, եթէ ոչ անձնապէս, գոնէ գործատուներու եւ դրամատուներու ներկայացուցիչներու միջոցաւ: Պերլինի յստակ կեցուածքն էր որ գերմանացի դիւանագիտական ներկայացուցիչները անտարբեր մնան եղած բողոքներուն հանդէպ, մղուած դաշնակցային հետաքրքրութիւններէ:

Kamran Ekbal

«Իհսանուլլահ Խան Տուստար, կովկասեան յեղափոխականները եւ Իրանեան Ընկերվարական Սովետական Հանրապետութեան հիմնադրութիւնը, 1920-1921» (էջ 237-252):

Հիւսիսային Իրանի տարածքին ազգայնական եւ ընկերային յեղափոխական շարժումն է որ կը ներկայացուի: Հակամարտութիւնն է իսլամական ազգայնական եւ ընկերային կողմերուն: Հիմնականին բրիտանական իշխանութեան դէմ էր յեղափոխութիւնը՝ հակառակ Բրիտանիոյ կողմէ հովանաւորուած Թեհրանի կենդրոնական կառավարութեան:

Salavat Midchatovic Ischakov

«Ռուսահպատակ իսլամները առաջին համաշխարհային պատերազմին» (էջ 253-270):

Հարցը ռուսահպատակ իսլամ զինուորներու մասին է: Ռուսաստան իբր Թուրքիոյ թշնամի՝ պարզ էր որ ունենար հարցեր իսլամ զինուորներու նկատմամբ: Վախ եւ անորոշութիւն Ռուսաստանի կողմէ միշտ աւելի մէկուսացուցած են իսլամ զինուորները: Ըստ հեղինակին իսլամ զինուորներու հետ վարուած են իբր «երկրորդ կարգի մարդիկ»:

Hans-Walter Schmuhl

«Հայերու ցեղասպանութիւնը 1915-1917 համեմատական հեռապատկերով» (էջ 271-299):

Հեղինակը կը փորձէ հայերու ցեղասպանութիւնը դիտել «ցեղասպանութեան տեսութեան» պատկերին մէջ, եւ ներկայացնել զայն «Օսմանեան կայսրութեան քայքայման եւ ազգայնական պետութեան կազմութեան» համայնապատկերին մէջ:

Յօդուածներու աւարտին էջ 301-302 դրուած է հատորիս մասնակցող հեղինակներու ցանկը:

Մատենագիտական ճոխ ցանկ մը կը փակէ ուսումնասիրութիւնը (էջ 303-327):

Հ. ՆԵՐՍԷՍ ՍԱԳԱՑԵԱՆ

© National Library of Armenia